

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

05.03.2007

ժ.11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Գևորգյան, Գ. Անանյան, Վ. Դավթյան, Վ. Դանիելյան, Յու. Պողոսյան, Ա. Աղազարյան (*խորհրդի անդամներ*)
Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Լ. Միրզոյան (ԱՎԾ նախագահի տեղակալ), Վ. Սարոյան (ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ), Դ. Մարտիրոսովա (ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Հ. Տիտիզյան (ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ):

Օրակարգի նախագծում` 7 հարց.

1. «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից իրականացված 2005թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան ՀՀ առողջապահության նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Չեկուցող` Դ. Մարտիրոսովա/

2. «Առողջապահական ոլորտի արդյունավետության գնահատում» հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին հարցը:

/Չեկուցող` Դ. Մարտիրոսովա/

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 18-ի «Օբյեկտների գործարկման և շինարարական աշխատանքների կատարման մասին» ձև թիվ 1-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 27-Ն, որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

4. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 9-ի «Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և կապիտալ ներդրումների իրականացման մասին» ձև թիվ-2ԿՇ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 132-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

5. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի «Հաշվետվություն օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և կապիտալ ներդրումների իրականացման մասին» ձև թիվ 2-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 37-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Չեկուցող` Գ. Անանյան/

6. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին՝ «Մեծ Բրիտանիա 06.02-09.02.2007թ. Ազգային հաշիվների կատարելագործումը. Ֆինանսական հաշվի մշակումը և ներդրումը թեմայով ուսումնական այցելության»:

/Չեկուցող` Վ.Դանիելյան, Ա. Սաֆյան, Հ. Տիտիզյան, Հ. Մատինյան/

7. Այլ հարցեր:

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

1. «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից իրականացված 2005թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան ՀՀ առողջապահության նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող` Գ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Թույլատրել ՀՀ առողջապահության նախարարությանը տրամադրել «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից իրականացված 2005թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմանով:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

2. «Առողջապահական ոլորտի արդյունավետության գնահատում» հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին հարցը:

/Զեկուցող` Գ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Հաստատել «Առողջապահական ոլորտի արդյունավետության գնահատում» հետազոտության հարցաթերթը:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 18-ի «Օբյեկտների գործարկման և շինարարական աշխատանքների կատարման մասին» ձև թիվ 1-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 27-Ն, որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող` Գ. Անանյան/

Որոշեցին՝

«Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 18-ի «Օբյեկտների գործարկման և շինարարական աշխատանքների կատարման մասին» ձև թիվ 1-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 27-Ն որոշման հավելված 1-ով հաստատված հաշվետվության ձևի 2-րդ, 3-րդ, 4-րդ աղյուսակներում «/փաստացի գներով` հազար դրամ/» բառերը փոխարինել «/փաստացի գներով` հազար դրամ` առանց ԱԱՀ/» բառերով:

/Նորմատիվ/

/Բվեարկության արդյունքները- կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/

4. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 9-ի «Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և կապիտալ

ներդրումների իրականացման մասին» ձև թիվ-2ԿԸ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 132-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:
/Չեկուցող՝ Գ. Անանյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 9-ի «Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և կապիտալ ներդրումների իրականացման մասին» ձև թիվ -2ԿԸ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 132-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման վերնագրում և ամբողջ տեքստում՝ «կապիտալ ներդրումներ» բառերը փոխարինել «շինարարություն» բառով՝ համապատասխան հոլովածներով:

2. Որոշման հավելված 1-ով հաստատված մեթոդական ցուցումների.

1) Որոշման ամբողջ տեքստում՝ «նախագծա-հետախուզական» բառը փոխարինել «ճարտարապետական, շինարարական նախագծման և կառուծքավորման (կրոնատրուկտորավորման)» բառերով,

2) 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) և անուղակի հարկերի գումարները շինարարության և հիմնական միջոցների գործարկման ծախսերի կազմում չեն ներառվում»:

3. Որոշման հավելված 1-ով հաստատված հաշվետվության ձևի.

1) 1-ին, 3-րդ, 4-րդ աղյուսակներում, ինչպես նաև «Տեղեկանք 1-ին բաժնի վերաբերյալ» աղյուսակում «/փաստացի գներով՝ հազար դրամ/» բառերը փոխարինել «/փաստացի գներով՝ հազար դրամ՝ առանց ԱԱՀ/» բառերով,

2) «Տեղեկանք 1-ին բաժնի վերաբերյալ» աղյուսակի 7, 8, 9 և 10 սյունակները հանել,

3) 3-րդ աղյուսակի «արտադրական ոլորտի» և «ոչ արտադրական ոլորտի» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «արտադրական նշանակության» և «ոչ արտադրական նշանակության» բառերով,

4) 4-րդ աղյուսակի 401 տողի ե) ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի «Հաշվետվություն օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և կապիտալ ներդրումների իրականացման մասին» ձև թիվ 2-ԿԸ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 37-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Չեկուցող՝ Գ. Անանյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի «Հաշվետվություն օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և կապիտալ ներդրումների իրականացման մասին» ձև թիվ 2-ԿԸ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 37-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման հավելվածով հաստատված մեթոդական ցուցումների 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) և այլ անուղակի հարկերի գումարները շինարարության և հիմնական միջոցների գործարկման ծախսերի կազմում չեն ներառվում»:

2. Որոշման հավելվածով հաստատված հաշվետվության ձևի 1-ին, 2-րդ աղյուսակներում «/փաստացի գներով՝ հազար դրամ/» բառերը փոխարինել «/փաստացի գներով՝ հազար դրամ՝ առանց ԱԱՀ/» բառերով:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

6. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին՝ «Մեծ Բրիտանիա 06.02-09.02.2007թ. Ազգային հաշիվների կատարելագործումը. Ֆինանսական հաշվի մշակումը և ներդրումը թեմայով ուսումնական այցելության»:

/Զեկուցող՝ Վ. Դանիելյան, Ա. Սաֆյան, Հ. Տիտիզյան, Հ. Մատինյան/

Որոշեցին՝

«Մեծ Բրիտանիա 06.02-09.02.2007թ. Ազգային հաշիվների կատարելագործումը. Ֆինանսական հաշվի մշակումը և ներդրումը» թեմայով ուսումնական այցելության մասին հաղորդումն ընդունելի գիտություն:

/Արձանագրային/

/Բովանդակության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ